ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 189.30. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները չներկայացվելը

(հոդվածը 12.05.25 ՀՕ-110-Ն օրենքի լրացման մասով ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 31-ից)

Հոդված 189.31. Ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների կողմից օտարերկրացու հետ կնքված կրթության (ուսումնառության) մասին պայմանագիրը լուծելու կամ կրթությունը ընդհատվելու մասին (ուսումնառությունը) սահմանված կարգով չհայտնելը.

1. Ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների կողմից միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնին օտարերկրացու հետ կնքված կրթության (ուսումնառության) մասին պայմանագիրը լուծելու կամ կրթությունը ընդհատվելու մասին (ուսումնառությունը) սահմանված կարգով՝ լուծելու կամ ընդհատելու օրվանից տասնօրյա ժամկետում չհայտնելը՝

առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը վարչական տույժ նշանակելու մասին որոշման բողոքարկման սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 224.2. Միգրացիայի և քաղաքացիության բնագավառում լիազոր մարմինը

1. Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի և քաղաքացիության բնագավառում լիազոր մարմինը քննում է սույն օրենսգրքի 189.31-րդ, 195.1-196-րդ հոդվածներով և 201-րդ հոդվածի 1-ին (բացառությամբ պետական սահմանը հատելիս հայտնաբերված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի) և 2-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը: